01/10.5/4653-10
2010-04-27

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Լյովա Խաչատրյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ։

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 34-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված է սահմանափակում այն անձանց համար, ովքեր օժտված են իշխանական լիազորություններով և զբաղվում են համապատասխան գործունեությամբ, և այդ առումով նրանց ապաքաղաքականացումը, չեզոքությունն ընտրական գործընթացներից խիստ հիմնավորված է։ Մինչդեռ նախագծով նախատեսված անձինք իշխանական լիազորություններով օժտված չեն և չեն կարող ներազդել ընտրական գործընթացների վրա, ուստի նախատեսվող սահմանափակումը տարածել նաև ուսումնական և նախադպրոցական հաստատություններում մանկավարժական աշխատողների ու կրթական գործընթացներին մասնակցող անձանց վրա հիմնավորված չէ։

Ելնելով նշվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունմանը։

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Գ. Դանիելյանը։

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-854-24.03.2010-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում լրացում կատարելու մասին

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1999 թվականի փետրվարի 5-ի ընտրական օրենսգրքի 34-րդ հոդվածի 4-րդ մասը «թեկնածուներրե բառից հետո լրացնել «, ուսումնական եւ նախադպրոցական հաստատություններում մանկավարժական աշխատողներն ու կրթական գործընթացներին մասնակից այլ անձինքե բառերը։

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտության

Նախագծով առաջարկվում է Հայաստանի Հանրապետությունում ուսումնական եւ նախադպրոցական հաստատություններում մանկավարժական աշխատողներին ու կրթական գործընթացներին մասնակից այլ անձանց զերծ պահել քաղաքական գործընթացներից։